

նան և իր որդին Հանջէ: Վերոգրեալ Սարգիս վրդ. ի նկատմամբ յիշատակարանին հատուածը հետեւեալն է. «Զվշտագնեալս, թախծեալս ոգւով զաշխատող գրոցս և զվարդապետն իմ զՍարգիս, որ յայտն առի փոխեցաւ ի Քրիստոս յերուսաղեմ քաղաք. որում ողորմեացի Քս. Ած. ի գալստեան իւրում. և ձեզ որ յիշատակէք ամէն»:

ՍԱՐԳԻՍ ՎՐԳ. — Մը. Երուսաղէմի Մաւրիլլա կոչուած աւերակին պեղումներէն գտնուած է հետեւեալ հայերէն արձանագրութիւնը. «Քրիստոս ողորմի Սարգիս վրդ. ի հոգւոյ ծնողացն» թուականը աւրուած է և յետոյ տեղական կառավարութեան կողմէն նոյն պեղումները արգելուած են (Սարալան. էջ 1267): Իսկ Տիգրանակերտցի Յակոբ եպս. իր Օրագրութեան մէջ (2 Փետր. 1848) հետեւեալը կը գրէ այս արձանագրութեան մասին. «Հրամանաւ սրբազանին գնացաք արտաքոյ քաղաքիս արեւմտեան կողմը ի վերայ մեծ ջրոյ հաւուզին մի տեղ նորոգ բացեալ է. յոր տեսաք ի վերայ որմոյ գիր հայկական, մի տողն հագիւ ժամանակն ներեաց գրել այսպէս. «+ Քրիստոս ողորմի Սարգիս վրդ. և այլն.» զոր բերեալ ցոյց տուաք սրբազանին, հրաման արար ի վաղեան օր գնալ առ բզեշխն և առ պաշքեաթիպն խօսիլ և այլն»:

ՍԱՐԳԻՍ ՎՐԳ. ՍԱՐՐԱՅԵԱՆ, ՊՈՂՍԵՑԻ. — Ծ. 1699 ին Ագրիանուպոլսի մէջ, և որ յետոյ Պոլիս կը հաստատուի ծնողացը հետ: 1719ին կ'աշակերտի Կոլոտ Յովհաննէս պտրք. ի. Զո. 1726ին, նախ քարոզիչ Պոլսի մէջ, և ապա Առ. Կեսարիոյ 1730ին. Ս. Կարապետի վանքին պարտուց վճարման համար գըրամահաւաքութիւն կը կատարէ Ատանայի և Հալէպի մէջ և կը վճարէ պարտքը. 1734ին կը ձեռնադրուի եպս.: Շղթայակիր պտրք. ի հրաւէրով Սարգիս վրդ. Կեսարիաէն կը ժամանէ Պոլիս և կ'աշակցի պատրիարքին՝ Յունաց հետ ունեցած խընդիրներու կարգադրութեան առթիւ. Ն. Երուսաղէմի Զմիւռնիոյ մէջ Շղթայակիրի կոնդակոյ 1740ին. Առ. Գաղատիոյ (1738—40): Ուխտի համար և միաժամանակ տպարանական գործով կ'ուղևորի Հոռով 1744ին և կը հաստատուի Վենետիկ 1773ին. իր կենսագրութեան և հրատարակութիւններու մանրամասնութիւնները տեսնել կենսագրութիւն (Սարգիս եպս. Սարափեանի գիրքը. նաև Հա. 1907): Իր տապանագիրն է հետեւեալը.